

ՄԻՋՆԱԿԱՐԳԻ «ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՒՐ» ՇԱՐՔ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՏՐԱԿ



ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿԱՐԳ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԻՒՐԵՃԵԱՆ

ՄԱՐԾ ԳԱԼԱՅՈՒՆ-ԶԻՒՐԵՃԵԱՆ

«ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՏՐԱԿ»ՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Աշխատանքի անհրաժեշտ գործիքներ՝ Աշխատանքի չորս յաջորդական Տետրակներ կու գան ամբողջացնելու «ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻԻՐ» ընթերցարանները: Անոնց ձգտումը՝ լեզուի կենդանի ուսուցումն է միշտ, սակայն իբր նիւթ կամ մարզ ունենալով քերականակութիւնը, մարզոր չէր կրնար ներառուիլ դասագիրքերուն մէջ - առանց զանոնք տարապայմանօրէն խճողելու:

Այս «Տետրակ»ներէն իրաքանչիւրի մուտքին կ'արժէ, կը հաստատանք, շեշտել ամբողջ շարքը հիմնող քանի մը սկզբունքներ.-

1. Քերականական նիւթի եւ մեթոտի օգտագործում լեզուի ուսուցման համար - այս էր ու կը մնայ քերականութեան կոչումին մեր պատկերացումը՝ Միջնակարգ-Երկրորդականի դասարաններն ի վեր: Քերականութիւնը՝ իբր լեզուաբանական-տեսական կրթանք՝ լրի դուրս կը ձգուի այս սահմաններէն: Բացառումին դրդապատճառները մասնավարժական են, իրական-գործնական. կրթական բարձրագոյն հիմնարկի յատուկ նիւթեր ու մեթոտ՝ անյարիւր են 12-15 տարեկան պատանի-պատանուիներու եւ՝ մտակառոյցին ու շահագրգռութիւններուն, եւ՝ կարիքներուն ու բացերուն: Յատկապէս Միջնակարգի երեք-չորս կարգերուն ու անոնց խճողեալ դասացուցակներուն մէջ, պարտինք ի գործ դնել բոլոր միջոցները՝ կարելի անբերութեամբ կիրառական հայերէն սորվեցնելու համար - լեզուն ճիշդ գրել, լեզուն ճիշդ կարդալ-արտասանել, նաեւ -մինչեւ իսկ- ճիշդ խօսիլ... Մեր ուսուցիչներուն լա՛ն ծանօթ պայմաններու մէջ, ու Սփիւտքի մինչեւ «լրի հայախօս» գօտիները ներառեալ, այս առաջնահերթութիւններէն անդին ամէն գիտելիք, ամէն նիւթ, ուզուի կամ ոչ, պերճանք է:

2. Ուրեմն, Աշխատանքի Տետրակներով ջանացած ենք քերականութեան նիւթը տալ խիտ ու զտուած՝ իբր ողեցոյց վարժութիւններու, որոնք կը գրաւեն կարեւոր մասը, դասատորուած՝ էջին իսկ վրայ կատարուելու յարձարութեամբ: Կարիք չունինք բնորոշելու վարժութիւններու ռճն ու տեսակները. արդէն առաջին ուշադիր ակնարկով մը՝ մեր գործակից-ուսուցիչները պիտի նկատեն, որ անոնք ունին «կատուցային» ներշնչում, կը միտին լեզուամտածողական ամբողջներու ընկալման կամ ստեղծման՝ գործարկումով, հեռու՝ տեսական ակտորժակներէ: Ժամանակ խնայելու մտքով, պատրաստուած են ու տրամադրելի՝ «առարկայական» տիպի վարժութիւններու պատասխանները: Նոյն նպատակին կը ծառայէ ներդիր պրակը՝ 8 պատրաստ «գրաւոր»ներով (ստուգում կամ դասարանային աշխատանք):

Հոս երախտագիտութեամբ կը նշենք, որ «Տետրակ»ներու նիւթի բէ՛ վարժութիւններու ձեւատրման մէջ (ինչպէս օրին՝ «Հայրենի Աղբիւր»ներու մշակումին), խորհրդատուութիւնն ու բարեկամական քաջալերանքը վայելած ենք վաստակաւոր պաշտօնակիցներու, մասնատրապէս Գէորգ Գանտախարեանի, Լուսին Մալիքեանի եւ Շաղիկ Մկրտիչեանի: *(չար՝ երկնի կողք, մկրտ)*

ՄԻՋՆԱԿԱՐԳԻ «ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՒՐ» ՇԱՐՔ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՏՐԱԿ

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿԱՐԳ

(«ԳՐԱԲՈՐ»-Ի ՈՒԹ ՀԱՐՅԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՄԲՈՂՋ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԻՒՐՔՆԵԱՆ - ՄԱՐՕ ԳԱԼԱՅՈՒՆ-ԶԻՒՐՔՆԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
1. Բայ-ստորոզիչ. Ենթակայ	2
2. Լրացուցիչներ - Ուղիղ խնդիր	5
3. Շրջուած Ենթակայ. Լռելեայն Ենթակայ	7
4. Լրացուցիչներ - Անուղղակի խնդիր	10
5. Հոմանիշ / Հականիշ (Բառագիտութիւն)	12
6. Ասոյթներ (Բառագիտութիւն)	15
7. Արմատ / Բարդ բառ (Բառակազմութիւն)	17
8. Ածանց-մասնիկ / Ածանցաւոր բառ (Բառակազմութիւն)	19
9. Հոլովներ - Կանոնաւոր	21
10. Հոլովներ - Անկանոն	24
11. Յատկացուցիչ	27
- <i>Գրաւոր Ստուգումի հարցարաններ՝ Թիւ 1էն Թիւ 8 (Ներդիր պրակ)</i>	29-44
12. Անձնական Դերանուն (ա.)	46
13. Անձնական Դերանուն (բ.)	49
14. Որակական Ածական	51
15. Թուական Ածական	54
16. Ցուցական Ածական	56
17. Բայի ժամանակներ (Վերաբաղ)	
- Ներկայ, Անկատար եւ Կատարեալ Անցեալ, Ապառնի	58
18. Բայի ժամանակներ - Հրամայական	61
19. Բայի ժամանակներ - Անկատար Ապառնի, Յարակատար Ներկայ	63
20. Նախադասութիւն	67
21. Կէտադրութիւն	69

1

ԲԱՅ-ՍՏՈՐՈԳԻՉ. ԵՆԹԱԿԱՅ

Ա

Բայրը, գիտենք, «բան մը ընել» կամ «բան մը ըլլալ» կը ցուցնէ. արարք մը կամ վիճակ մը կը նշէ:

Օրինակ՝ վազել, հիւանդանալ, ըլլալ:

Երբ բայը նախադասութեան մէջ մտնէ, կը գործածուի խոնարհուած .- *կը վազես, հիւանդացայ, պիտի ըլլան:* Անիկա նախադասութեան ՍՏՈՐՈԳԻՉՆ է:

1. Տուփիկի մէջ առ ՍՏՈՐՈԳԻՉՆԵՐՈՂ - անոնք ցոյց կուտան «բան մը ընել» կամ «բան մը ըլլալ» - գործողութիւն մը կամ վիճակ մը:

Այսպէս՝ Դայրս սենեակին փսիաթը կը տարածէր : Կամ՝ Աղջկան մայրը լուռ էր :

ա. Մայրս կը հետեւէր հօրս աշխատանքին:

բ. Նոճիները հեռուն մեղմօրէն կ'օրօրուէին:

գ. Ուտանաւորը դրոշմուեցաւ մտքիս մէջ:

դ. Շատ քիչ պոլսեցիներ թէյ կը խմէին այդ օրերուն:

ե. Աղջնակին հայրը տուն կը դառնար իրիկունը:

զ. Մուրճի հարուածները համաչափ էին:

է. Իրիկնային երկինքը կաս-կարմիր եղաւ:

ը. Աղջնակը չորս տարեկան պիտի ըլլար:

թ. Դայրս բնաւ անհանգիստ չէր:

ժ. Տնեցիներուն զարմանքը մեծ եղաւ:

Ծանօթութիւն.-

- Երբ վիճակի բայ-ստորոգիչ մը ունինք եւ քովը՝ ենթակային կապուող բառ մը (Օրինակ.- *լուռ* ածականը՝ *Աղջկան մայրը լուռ էր* նախադասութեան մէջ), այդ բառը կը նկատենք բային մասը, եւ կը շրջանակենք անոր հետ.- լուռ էր :

ԵՆԹԱԿԱՆ «բան մը ընողը» կամ «բան մը եղողն» է. անձ, կենդանի կամ առարկայ: Եթէ «ստորոգիչին վրայ» հարցնենք *ո՞վ (որո՞նք), ի՞նչ բան, պատասխան կ'ունենանք ենթական:*

2. Ստորոգիչը ա՛ն տուփիկի մեջ. հարցո՛ւր *ո՞վ (որո՞նք), ի՞նչ բան* հարցումները, եւ ԵՆԹԱԿԱՆ գտնելով՝ տակը դի՛ր խաչ մը.-

Այսպէս՝ Գայրս փսիաթը կը գամէր:

x

- ա. Կրակին վրայ ջուրը կ'եռար թշի համար:
- բ. Աշակերտները այբուբենը թերթէ չեն սորվիր:
- գ. Մօրաքոյրս ինձի չօգնեց այսօր:
- դ. Ոտանաւորը գրուած էր ազատութեան մասին:
- ե. Մուրճի հարուածները միտքս կ'օրօրէին:

3. Վերադարձի՛ր վարժութիւն 1ին (ա., բ., գ., դ. եւ ե. նախադասութիւններ): Ստորոգիչին «հարցո՛ւր» *ո՞վ (որո՞նք), ի՞նչ բան*, եւ հոս գրէ՛ գտած ԵՆԹԱԿԱՆ.-

Այսպէս՝ Գայրս...

x

- ա.
- բ.
- գ.
- դ.
- ե.

4. Վերադարձի՛ր վարժութիւն 1ին (գ., է., ը., թ. եւ ժ. նախադասութիւններ): Ստորոգիչին «հարցո՛ւր» *ո՞վ (որո՞նք), ի՞նչ բան* հարցումները. եւ գտնուած ԵՆԹԱԿԱՆ գրէ՛ հոս. յետոյ անով կազմէ՛ նոր նախադասութիւն մը.-

Այսպէս՝ Մայրը → Զու մայրդ այսօր տունէն բացակա՞ էր:

x

- գ. →
- է. →
- ը. →
- թ. →
- ժ. →

5. Աւելցո՛ւր յարմար ԵՆԹԱԿԱՅ մը (Ուշադի՛ր. եթէ ստորոգիչը եզակի է, ենթական ալ եզակի է. եթէ յոգնակի է, ենթական՝ նոյնպէս:)

Այսպէս՝ Ծնողները կը սիրէին իրենց փոքրիկ աղջիկը:

- ա. թէլ պատրաստելու սովորութիւնը բերած էր Կովկասէն:
- բ. եւ յաճախ կը միջամտէին:
- գ. եւ կ'երգէին մեղմ ձայնով:
- դ. կը դիտէին աշնանային վերջալոյսը:
- ե. անսխալ արտասանեց «Ազատն Աստուած»ը:

6. Երբեմն քանի մը ստորագիշներ ՄԵԿ ԵՆԹԱԿԱՅ կ'ունենան: Տուփիկի մէջ առ ստորագիշները, եւ ենթական միացո՛ւր անոնց.-

Այսպէս՝ **Հայրս քովս** եկաւ ու **զիս գիրկը** առաւ:

- ա. Պարոն Յովհաննեսեանը կը բանար օրուան թերթը եւ կը կարդար:
- բ. Հայրս գործը ձգեց, եկաւ քովս ու զիս գիրկը առաւ:
- գ. Մարդը տուն դարձաւ, լուացուեցաւ, փոխուեցաւ եւ նստաւ բազմոցին վրայ:
- դ. Մօրաքոյրս յաճախ կը մտահոգուէր եւ ինծի դիտողութիւն կ'ընէր:
- ե. Ուսուցիչը չիաւատաց մեզի, եւ բակ ելաւ անձամբ ստուգելու ըսուածը:

Ծանօթութիւն.-

- ենթական միշտ կ'ըլլայ Ուղղական հոլով:
- Հին դասագիրքերու մէջ ան երբեմն կոչուած է տերբայի:

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Տարբեր տառերով տրուած են ուղղագրական այն կէտերը, որոնք պէտք է բացատրուին:

Սկիզբը՝ քանի մը կանոններ.-

- *-եւ վերջացող բայերու անկատար անցեալը, երրորդ դէմք՝ -էր, է-ով:*
 - *Չայնաւորով սկսող բայեր. կը-ի տեղ՝ կ' (ապաթարցով): Բայց ասոնցմէ պէտք է զանազանուին կու տար, կու գար, կու լար (տալ, գալ, լալ) բայերը, որոնք առանց ապաթարցի են (կու = կը):*
 - *Եթէ -է-էն ետք -ի տառը գայ, երկու տառերը կը գրուին իրար փակած (-էի-), իրենց միջեւ առանց ուրիշ գիրի: Մինչ եթէ -ի-ն գայ -ա-է ետք, երկուքին միջեւ միշտ -յ- կը մտնէ:*
- Այսպէս՝ կ'օրօրէին, բայց՝ աշնանային:*

Հայրս պարտէզին վրայ նայող սենեակի մը խսիրը կը տարածէր, եւ պատերուն ստորոտը կը զամէր: Մուրճի համաչափ հարուածները կ'օրօրէին միտքս:

Մայրս, քովս նստած, լուռ կը հետեւէր հօրս աշխատանքին:

Դուրսը աշնանային վերջալոյսը կը բոցավառէր երկինքը: Հովը նոճիներուն մեղմ շարժում մը կու տար:

2

ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ.- ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐը նախադասութեան ա՛յն բառն է, որուն վրայ ենթական կը կատարէ ըստորոգիչին գործողութիւնը:

1. Ստորոգիչը ա՛ն տուփիկի մէջ. յետոյ ընդգծէ՝ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐը.-
Այսպէս՝ Ուսուցիչը պատռեց հարցումներու քերթը:

- ա. Տղաքը ուշադրութեամբ վերցուցին հանրագիտարանը:
- բ. Անոնք ստացան իրենց մրցանակը:
- գ. Պատին վրայ աշակերտուիին թիւերը գրեց:
- դ. Գիրքերը բերաւ ներս եւ տեղաւորեց:
- ե. Դատակազմը լուսանկարչական գործիք մը նուիրեց ինծի:
- զ. Նոր հաշուիչ մը գնեց կնքահայրս Կաղանդին:
- է. Գրավաճառը պիտի ծախէ մեծ բառարանը:

2. Աւելցո՛ւր ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ մը.-

(Կը տեսնես, հայերէնի մէջ ուղիղ խնդիրը կրնայ դրուիլ ստորոգիչէն ետք կամ առաջ:)

Այսպէս՝ Տղան գնեց նոր ^{հաշուիչ} մը:

- ա. Հայրս սենեակի մը կը տարածէր:
- բ. Մենք կը բանայինք օրուան
- գ. Ուրեմն պատրաստե՛նք, կազմե՛նք
- դ. Կաղանդին մը նուիրեցինք իրեն:
- ե. Ո՞ւր կը տանիս այդ ծանր

3. Բերանացի աշխատանք: Դասընկերոջ մը առաջարկէ՝ գոյական մը: Ան գոյականը պէտք է գործածէ օրինակի մը մէջ՝ իբր ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ.-

Այսպես՝ Մեկը կ'ըստ «թերթ»

Միսը կ'ամբողջացնէ.- Մայրս ամեն օր իր թերթը կը կարդայ:

4. Թիւ 3ի ամենայաջող հինգ նախադասութիւնները տակ-տակի կը գրենք, եւ կ'ընդգծենք ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐը.-

ա.

բ.

գ.

դ.

ե.

5. Բառը գործածէ՛ նախադասութեան մէջ՝

օ նախ իբր ԵՆԹԱԿԱՅ,

օ յետոյ իբր ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ.-

Այսպէս՝ Հանրագիտարան

օ ենթակայ → Հանրագիտարանը բաւական մաշած է:

օ Ուղիղ խնդիր → Աշակերտը վերջուց ծանր հանրագիտարանը:

ա. Լուսանկարչական գործիք

օ ենթակայ →

օ Ուղիղ խնդիր →

բ. Ոտանաւորը

օ ենթակայ →

օ Ուղիղ խնդիր →

գ. Աշակերտները

օ ենթակայ →

օ Ուղիղ խնդիր →

6. Գտի՛ր ստորոգիչին յարմար երկու ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐՆԵՐ.-

Այսպէս՝ Շատ կը սիրեմ *երգը եւ պարը* .:

ա. Ինչո՞ւ կը պատժես եւ

բ. Լաւ արտասանեցիր եւ

- գ. Ուշադիր դիտեցի եւ
- դ. Ապրի՛ս, շահեցար եւ
- ե. Երկար քննեցի եւ

Ծանօթ. - Ուղիղ խնդիրը միշտ կ'ըլլայ հայցական հոլով:

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Քանի մը նոր ուղղագրական կանոններ.-

- Անուններու վերջը գրեթէ միշտ՝ **-ք** (հին հայերէնի յոգնակիի նշան մը):
- Բաղաձայնէ ետք եւ ծայնաւորէ առաջ, ու կը հնչուի **-վ**.- պատրաստուած, գնահատուին, ընտրուած...

Հարցումները պատրաստուած պիտի ըլլան կրթական Տնօրէնութեան արտօնած դասագիրքերէն, պատասխանները պիտի գնահատուին յատուկ ընտրուած դատակազմի մը կողմէ:

Մրցումին պիտի կրնան ներկայ ըլլալ նաեւ ծնողները, հետեւելու համար անոր ընթացքին: Առաջին մրցանակն է լուսանկարչական գործիք մը:



3

ՇՐՋՈՒԱԾ ԵՆԹԱԿԱՅ. ԼՌԵԼԵԱՅՆ ԵՆԹԱԿԱՅ

Ա

Ենթական «ՇՐՋՈՒԱԾ» կը կոչուի, երբ դրուած է ստորոգիչէն ետք: Շրջելու այս ձեւին կը դիմենք՝ աւելի շեշտելու համար նախադասութեան մէկ անդամը - ստորոգիչը, ուղիղ խնդիրը...:

1. Ստորոգիչը առ տուփիկի մէ՛ջ. հարցո՛ւր՝ *ո՞վ (որո՞նք), ի՞նչ բան, եւ երկու խա՛ջ դիր ՇՐՋՈՒԱԾ ԵՆԹԱԿԱՅԻՆ տակ.*-

Այսպէս՝ *Անուշիկ եղնիկ մը* քերաւ *որսորդը մեզի:*

xx

ա. Վախէն՝ արագ կը բարախէր անոր սիրտը:

բ. Իրեն կաթ տուած էր իր խարտեաշ մայրը:

- գ. Եղջիւրներով կաղնիները հարուածած էր իր հայրը:
- դ. Աս որքա՛ն սաստկացաւ քամին:
- ե. Յանկարծ հովէն աղմուկով բացուեցաւ պատուհանը:

2. Աւելցո՛ւր յարմար ՇՐՋՈՒԱԾ ԵՆԹԱԿԱՅ մը.-

Այսպէս՝ երեխաներէս հետացաւ եղնիկը :

- ա. Զօրացաւ լեռներէն դէպի քաղաք փչող
- բ. Վախցած՝ անկիւն մը կծկուած էին
- գ. Հովին պատմածները շատ լաւ էր հասկնար
- դ. Կարծես ուղղակի մեր դրան առջեւ ըլլար

3. Բերանացի վարժութիւն: Պարզ ենթական վերածէ՛ ՇՐՋՈՒԱԾ ԵՆԹԱԿԱՅի.-

(Նկատէ՛ ամէն մէկ նախադասութեան ո՛ր բառը կը շեշտուի շրջումով:)

Այսպէս՝ եղնիկը կը դողար վախէն: → Վախէն կը դողար եղնիկը:

- ա. Պզտիկներուն հայրը մէկ բանէ շատ կը զարմանար:
- բ. Եղնիկը մեզմէ գաղտնի պատշգամ կը բարձրանար:
- գ. Փոթորիկը պատուհանէն ներս խուժեց:
- դ. Անտառին բոյրը լեցուած էր սենեակին մէջ:

Բ

Երբեմն ենթական գրուած չ'ըլլար եւ իմաստով կը հասկցուի. կ'ըսենք՝ «ԼՌԵԼԵԱՅՆ ԵՆԹԱԿԱՅ»: Անոր ով ըլլալը կը հասկնանք ստորոգիչէն եւ միւս նախադասութիւններէն:

4. Գտնե՛նք եւ գրե՛նք ԼՌԵԼԵԱՅՆ ԵՆԹԱԿԱՆ՝ հարցնելով ո՞վ (որո՞նք), ի՞նչ բան:

Այսպէս՝ Արդեօք (ան) կը յիշէ՞ր այդ անտառը:

- ա. Եղնիկը ո՞ւր է. (.....) չեմ գիտեր:
- բ. Եթէ յանկարծ (.....) պատշգամ ելլէի, (.....) երկար պահ մը չէր զգար ներկայութիւնս:
- գ. Արդեօք (.....) գիտե՞ր, որ (.....) երկար կը դիտէինք զինք:
- դ. Սկիզբը, երբ (.....) կը բռնէի զայն, քնքուշ մարմինով (.....) կը կծկուէր գիրկս:

5. Նախադասութեան խաղ: Ամբողջացո՛ւր.-

<i>Արդեօք</i>	<i>գիտե՞ր,</i>	<i>որ</i>	<i>կը դիտէինք</i>	<i>զինք:</i>
Արդեօք	կը	որ	կը	զինք:
Արդեօք կը	,	որ	կը	զինք:
Արդեօք կը	,	որ	կը	զինք:

6. Առաջին փորձ քերականական լուծումի (ենթակայ եւ ուղիղ խնդիր).-

Այսպէս՝ Բարեկամ մը շրջակայ լեռներէն եղնիկ մը բերաւ մեզի:

Բարեկամ → Հասարակ գոյական, եզակի, ուղղական հոլով, ենթակայ «բերաւ» ստորոգիչին:

եղնիկ → Հասարակ գոյական, եզակի, հայցական հոլով, ուղիղ խնդիր «բերաւ» ստորոգիչին:

ա. Իր խարտեաշ մայրը իրեն կաթ տուած էր:

մայրը →

կաթ →

բ. Փեղկերը աղմուկով բացուեցան ու փոթորիկը ներս խուժեց:

փեղկերը →

փոթորիկը →

գ. Կը հեռացնէի երեխաներս ու եղնիկը կը ձգէի մինակ:

երեխաներս →

եղնիկը →

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Քանի մը կանոններ.-

- Յաճախ դ-էն ետք ք- կը դրուի.- եղջիր, գոջալ: Բացառութիւն՝ գեղջ:

- Բայի ժխտականի վերջաւորութեան -երը՝ -ե-ով. Չեմ գիտեր, չէի խանգարեր:

Արդեօք եղնիկը, անտառներու այդ զաւակը, կը յիշէ՞ր, որ անոնց ծոցին՝ իր մայրը կաթ տուած էր իրեն. իր հայրը եղջ իւրներով հարուածած էր կաղնիները: Գիտէ՞ր որ այդ ծայնը օրօրած էր իր կեանքի առաջին օրերը...

Չեմ գիտեր. բայց իր վճիտ աչուկներուն մէջ թախծի ու կարօտի արտայայտութիւն մը կը տեսնէի: Ձինք չէի խանգարեր. մինակ ձգելով՝ կը հեռանայի պատշգամէն, հեռացնելով նաեւ երեխաներս...

4

ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ.- ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

- Երբ ստորագիշին գործողութիւնը ուղղակի չի կատարուիր լրացուցիչին վրայ, այլ անուղղակի՝ դէպի իրեն գացող շարժումի ձեւով, այն ատեն այդ լրացուցիչը կը կոչուի **ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ** (փոխանակ ուղիղ խնդիրի):
 - Անուղղակի խնդիրը յաճախ տրական հոլով է:

1. Ամբողջացո՛ւր նախադասութիւնը՝ գիծով մը յարմար ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐԸ միացնելով իրեն (ա.ը միացուած է՝ իբր օրինակ).-

- | | |
|---------------------------------|-------------------------|
| ա. Տղաքը նիզակներով մօտեցան ... | - հիւանդ աղջկան: |
| բ. Գիւանդ են, մի բարկանաք... | - Շուշիկին եւ Սարգիսին: |
| գ. Ինչպէ՛ս լուր տանք... | - ծնողներուն: |
| դ. Մի՛ վախճար. նայէ՛... | - աչքերուն: |
| ե. Շուշիկը, լուռ՝ կը հետեւեր... | - վիրաւոր գազանին: |
| զ. Գասօն կը մեղքնար... | - Աշոտին: |

2. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ, թէ՞ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ: Ստորագիշը ա՛ն տուփիկի մէջ գտի՛ր ուղիղ խնդիրը, ընդգծէ՛ (մէկ գիծ). յետոյ գտի՛ր անուղղակի խնդիրը եւ ընդգծէ՛ (երկու գիծ).-

Այսպէս՝ **Տղաքը լուր մը դրկեցին իրենց ծնողներուն:**

- ա. Չորս նիզակներ նետեցին յովազին:
 բ. Գասօն ողկոյզը երկարեց Շուշիկին:
 գ. Կաթած արիւն նկատեցին եւ մօտեցան բիծերուն՝ քննելու:
 դ. Գասօն սրինգ կը նուազեր եւ աչքին տակէն կը հետեւեր գազանին:
 ե. Ահա ան շարժեցաւ եւ տղոց ցոյց տուաւ իր ժանիքները:

3. Պահէ՛ երկու ձեւերէն՝ ծիշողը. կա՛մ հայցական հոլով ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ, կա՛մ տրական հոլով ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ (Ուշադրութեամբ պէտք է կարդալ ստորագիշը).-

Այսպէս՝ **Աշոտը բարկացաւ ... ^{Շուշիկին} (Շուշիկը - Շուշիկին)**

ա. Տեսա՞ք (նոխազը - նոխազին). ինչպէ՛ս կը նայի: (տղան - տղուն)

- բ. Շուշիկը կը դիտէր վազող: (քարայծները - քարայծներուն)
 գ. Ինչո՞ւ կը բարկանաս: (Հասօն - Հասոյին)
 դ. Տղաքը վերցուցին (նիզակները - նիզակներուն) եւ մօտեցան
 (գազանը - գազանի՞ն):
 ե. Անոնք սպաննեցին: (յովազը - յովազին)

4. Անուղղակի խնդիրներուն առջեւ աւելցո՛ւր ենթակայ մը եւ ստորագիչ մը.-

- ա. Սարգիսին:
 բ. ժայռերուն:
 գ. հիւանդ աղջկան:
 դ. վիրաւոր քարայծներուն:
 ե. Յովազածորին:

ՈՒՇԱԴԻՐ. ԿՐՍԵՆՔ՝

- ա. Տղան կը պատժեմ, բայց տղուն կը բարկանամ:
 բ. Անին կը դիտեմ, Անին կը տեսնեմ, Անին կը նկատեմ, բայց Անիին կը նայիմ:
 գ. Երգը կը լսեմ, Երգը մտիկ կ'ընեմ, Երգը կը յիշեմ, բայց Երգին կը հետեւիմ:
 դ. Առաջնորդը կորսնցուցի, առաջնորդը գտայ, բայց առաջնորդին մօտեցայ:

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կանոններ.-

- ա, ի, ե- ծայնաւորներէն ետք, -վ ծայնը՝ կը գրուի -ւ.- աւ, իւ, եւ:
- Բառերուն սկիզբը միշտ՝ վ → վախ (ւ-ով բառ չի սկսիր):
- Ուշադիր. «վօ» ծայնը բառին սկիզբը կը գրենք ո- (ոսկոր, ոտք):

- Կերելի սատկած է,- կրցաւ միայն ըսել Աշոտը քիթին տակէն:

Լու՞ժ՝ Սարգիսը ոսկորներուն վրայ ցոյց տուաւ ականներու հետքեր: Այդ նշաններէն՝ Շուշիկը եւ Սարգիսը անորոշ վախ մը զգացին: Բոլորն ալ լուժ էին, եւ հաւանաբար բոլորին միտքին մէջ նոյն հարցն էր. «Ուրեմն մինակ չե՞նք Յովազածորի մէջ. Ուրեմն գազա՞ն մը կայ հոս, մեր կողքին»:

5

ՀՈՄԱՆԻՇ / ՀԱԿԱՆԻՇ

(ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ)

Ա

Երկու բառեր ՀՈՄԱՆԻՇ են, երբ մտաւորապէս նոյն իմաստը ունին:
(ԾԻՇԴ ՆՈՅՆ իմաստը ունեցող բառերը կը կոչուին նոյնանիշ):

1. Կապէ՛ հոմանիշները իրարու.-

- | | |
|---|--------------------------------------|
| <input type="checkbox"/> սպիտակ | <input type="checkbox"/> ընդարձակ |
| <input type="checkbox"/> լայն | <input type="checkbox"/> ճերմակ |
| <input type="checkbox"/> գիր | <input type="checkbox"/> պզտիկ |
| <input type="checkbox"/> պոռալ | <input type="checkbox"/> ուրախութիւն |
| <input type="checkbox"/> փոքրիկ | <input type="checkbox"/> հրճուիլ |
| <input type="checkbox"/> լեռ | <input type="checkbox"/> սար |
| <input type="checkbox"/> ուրախանալ | <input type="checkbox"/> տառ |
| <input type="checkbox"/> խանդավառութիւն | <input type="checkbox"/> բացականչել |

2. Ընտրէ՛ յարմար բառը, աւելցո՛ւր հոմանիշին տակ (առաջին բառը դրուած է).-
անսովոր. փայլ. նշան. հրամայել. անձաւ. շուարիլ. ատեն. զօրաւոր. դիրաշարժ

ա. Արեան բիծերը վերջացան քարայրի մը առջեւ:

նամմեռ

բ. Կրակին ցուրին տակ շողշողաց յովազին մորթը:

.....

գ. - Ե՛տ քաշուեցէք,- հրահանգեց ան:

.....

դ. Տարօրինա՛կ հրահանգ. բայց ժամանա՛կ էր դատելու:

.....

ե. Բայց... յովազը իրա՛ւ շփոթեցաւ:

.....

զ. Վերջին ուժերը կ'արթննային այդ ուժեղ եւ ծկուն մարմնին մէջ:

.....

3. Կրնա՞ս գտնել յարմար ՀՈՄԱՆԻՇ մը եւ ընդգծուած բառին տակ աւելցնել.-

ա. Չիերը արթննալով սարսափիլ սկսան:

.....

բ. Հրացանի պայթիւնին հետեւեցաւ սոսկալի ժխոր մը:

.....

գ. Լորտը կ'ուզէր յուսադրել պատանին:

.....

դ. Հսկայ խարոյկը հեռացուց, բայց միաժամանակ կատղեցուց գայլերը:

.....

ե. Յանկարծ դաշտը լեցուեցաւ տարօրինակ աղաղակով մը:

.....

Բ

Երկու բառեր ՀԱԿԱՆԻՇ են, երբ իրարու հակառակ իմաստ կ'արտայայտեն:

4. Կապէ՛ ՀԱԿԱՆԻՇները իրարու.-

o ծոյլ

o աղմկել

o արագաշարժ

o սովահար

o յաղթել

o մութ

o բախտաւոր

o լոյս

o դժբախտ

o լռել

o պարտուիլ

o աշխատասեր

o կուշտ

o դանդաղ

5. Ընտրե՛լ յարմար բառը եւ գրե՛լ իր ՀԱԿԱՆԻՇԻՆ տակ.-

. չայննալ . յուսահատեցնել . կարող . անհոգ . հեռանալ

ա. Հրացանները առին եւ մօտեցան ցանկապատին:

..... (ցանկապատին)

բ. Լորտը կ'ուզէր յուսադրել պատանին:

.....

գ. Գայլերու շրջանակը սեղմուեցաւ:

.....

դ. Երեք մարդ անկարող էին անոնց դէմ դնելու:

.....

ե. Ի՞նչ պիտի ընենք,- հարցուց ան մտահոգ:

.....

6. Հարցում մը հարցո՛ւր ընդգծուած բառին վրայ, եւ տո՛ւր ժխտական պատասխան՝ գործածելով ՀԱԿԱՆԻՇ մը.-

Այսպէս՝ Ակուարաները իսկապէս սովահար են:

Հարցում.- Ակուարաները սովահա՞ր են:

Պատասխան.- Ոչ, սովահար չեն, կուշտ են:

ա. Ի՞նչ տարօրինակ հրահանգ:

Հ.-→ *Հրահանգը տարօրինա՞կ է:*

Պ.-→ *Ոչ, տարօրինակ չէ,*

բ. Աշտը պռռալով հրահանգեց նիզակները նետել:

Հ.-→

Պ.-→

գ. Աշտը ընդունեց Սարգիսին ըսածը:

Հ.-→

Պ.-→

դ. Յովազը սատկած է:

Հ.-→

Պ.-→

ե. Ասոնք չափահաս քարայծի ոսկորներ են:

Հ.-→

Պ.-→

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Քանի մը կանոններ.-

- Յաճախ *ր-էն* ետք կ'ունենանք *ծ* (բարձր, դարձ...): *Բացառութիւններ՝ հարց, ապաքարց*:

- Յիշեցում.- *Գոյականներու յոգնակին՝ միշտ -ե-ով (-եր, -ներ): Չշփոթել բայի վերջաւորութեան հետ. կ'ապրէր, կ'ելլէր՝ է-ով:*

Երբ յովազը գլուխը բարձրացուց, Աշոտը ինքզինք գտաւ: Նկատած էր, որ անոր աչքերը մարած էին. պղտոր նայուածքը չէր վառեր պաղ լոյսով: Իր վերջին ժամերը կ'ապրէր:

Բայց գազանը հետզհետէ կ'ելլէր ան զգայութեան վիճակէն. մարող կեանքի վերջին ուժերը վտանգաւոր կերպով կ'արթննային այդ ուժեղ մարմինին մէջ... Ան պեխերը շարժեց, շրթունքը բացաւ, եւ ցոյց տուաւ ահռելի ժանիքները:

6

ԱՍՈՅԹՆԵՐ (ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ)

ԱՍՈՅԹՆԵՐԸ կը հարստացնեն լեզուն. անոնք կու տան կարելիութիւնը՝ սովորական բայ մը կամ ածական մը աւելի կենդանի ձեւով ըսելու:
(Դոս պիտի տեսնենք միայն բայական ասոյթներ):

*Այսպէս՝ Այս տղան պաղպաղակը շատ կը սիրէ ըսելու տեղ, կ'ըսենք՝
Այս տղան պաղպաղակի համար հոգի կու տայ:
Կամ՝ Երկու ժամ զիս յոգնեցուց շատ խօսելով, ըսելու տեղ, կ'ըսենք՝
Երկու ժամ գլուխս արդուկեց:*

1. ԱՍՈՅԹՆԵՐԸ գրէ՝ իրենց պարզ ձեւին քով: Յետոյ բարձրածայն կարդա՝ նախադասութիւնը՝ պարզ ձեւին տեղ ասոյթը գործածելով (Այն բառերը, որոնք կը փոխուին, արդէն դրուած են փոխուած ձեւով՝ շեղագիր).-

. սիրտ տալ. ինքզինք գտնել. ինքզինք հաւաքել. լեղին փրփիլ. սրտին խօսիլ. բերանը բաց մնալ

ա. Յովազը կամաց-կամաց կ'արթննար իր թնրութենէն:
.....:

- բ. Գայլերու կաղկանձէն ձիերը սարսափած էին: *ձիերուն*
-:
- գ. Աշտը կը քաջաւերէր ընկերները:*ընկերներուն*.
- դ. Շուշիկը շատ զարմացաւ երբ լսեց բացատրութիւնը: *Շուշիկին*
-:
- ե. Ռոպէրը զսպուեցաւ. չէր ուզեր իր վախը ցուցնել:
- զ. Սարգիսը կ'ախորժէր պտոյտէն: *Սարգիսին* *պտոյտը*.

2. ԱՍՈՅԹՆԵՐԸ գործածէ՛ հետաքրքրական նախադասութեան մը մէջ, եւ կարդա՛ դասարանին.-

- ա. Սիրտը կտորել (շատ նեղացնել)
-
-:
- բ. Լեզուին վրայ մագ բուսնիլ (բան մը շատ անգամներ ըսել)
-
-:
- գ. Վրայէն անցնիլ (վերաքաղ ընել)
-
-:
- դ. հոգին հանել (չարչարել, յոգնեցնել)
-

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կանոններ.-

- *Բարդ բառի մէջ՝ վ-, եթէ երկրորդ արմատը վ-ով սկսող բառ մըն էր.- բանակավայր:*
- *Յաճախ կը հնչենք ըստ-, ըսկ-, ըզգ-, եւ կը գրենք՝ ստ-, սկ-, զգ-: Ստուեր, զգալ:*

Այսպէս խօսելով, Լորտը կ'ուզէր սիրտ տալ պատանիին, բայց ծածուկ դող մը կը զգար. գայլերու այդ բանակը, որ գիշերով իրենց վրայ կը խուժէր, թերեւս քանի մը հարիւր գազան կը հաշուէր: Այդպէս կարելի էր եզրակացնել՝ դիտելով բանակավայրը շրջապատող ստուերներու բազմութիւնը:

Ձինք կը սարսափեցնէր մանաւանդ մտածումը, որ այդ սով ահար գազանները, մարդու եւ ձիու հոտ առած, պիտի չհեռանային՝ որսի իրենց բաժինները չստացած:

7

ԱՐՄԱՏ / ԲԱՐԴ ԲԱՌ (ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ)

Ա

- ԱՐՄԱՏ-ԲԱՌԸ բառ մըն է, որմով նոր բառեր կը կազմուին:
 - Արմատներ կան, որոնք կրնան գործածուիլ իբր առանձին բառեր.- *հող, մարդ, տուն, գիր...*
 - Արմատներ ալ կան, որոնք միայն ուրիշ բառերու կազմին մէջ կը գործածուին, եւ ոչ իբր առանձին բառեր.- *աշխատ-, կարդ-, հան- :*

1. Շրջանակէ՛ վարի ԱՐՄԱՏՆԵՐԷՆ անոնք, որոնք իբր առանձին բառ կը գործածուին.-
 - պարել - ուտել - գրել - գողնալ - լսել - մտնել - գոցել - երգել- լողալ - մարզուիլ -
 հանդարտիլ - սարսափիլ - նայիլ - տեսնել - վախնալ

2. Ո՞ր մէկն է ԿՐԿՆՈՒՈՂ ԱՐՄԱՏԸ. գտի՛ր, ընդգծէ՛ եւ գրէ՛.-
 - պանդոկապետ. պետական. խմբապետ → պետ
 - դժգոհ. գոհանալ. գոհունակ →
 - փողկապ. անկապ. կապկապել →
 - անքուն. քնաբեր. քնանալ →
 - մտահոգ. անմիտ. մտածել →

3. Դասարանին մէջ միասնաբար գտէ՛ք նոր բառեր՝ հետեւեալ ԱՐՄԱՏՆԵՐՈՎ.
 ամենահետաքրքրական երկու հատը գրէ՛ արմատին դէմ.-
 - միտ(ք) →
 - գիր →
 - ջուր →
 - տուն →
 - ձեռ(ք) →

Բ

Բառ մը ԲԱՐԴ է, երբ երկու (կամ աւելի) ԱՐՄԱՏՆԵՐԷ կազմուած է.- *գրատախտակ, ծովեզերք:*

4. Արմատները ԻՐԱՐՈՒ ԿԱՊԵԼՈՒ քանի մը ձեւ կայ.

ա. ձեւ՝ -ա- ՅՕԴԱԿԱՊՈՎ.

- գիր(ք) + ա + տուն → գրատուն
- արագ + ա + շարժ →
- մանուկ + ա + պարտէզ →
- երկաթ + ա + գործ →
- լեռ(ն) + ա + շղթայ →

բ. ձեւ՝ ի + ա → ե

- գարի + ա + ջուր → գարեջուր
- շոգի + ա + կառք →
- այգի + ա + գործ →
- ոսկի + ա + ջուր →

գ. ձեւ՝ առանց յօդակապի, երբ երկրորդ արմատը ձայնաւորով կը սկսի.

- ծով + եզերք → ծովեզերք
- լիճ + ափ →
- ձուկ(ն) + որս →
- երկաթ + ուղի →
- ծաղիկ + աման →

5. Անշուշտ նկատեցիր, որ բարդացումի ատեն որոշ արմատներու ձայնաւոր գիրը ԿԸ ՍՂՈՒԻ (ԿԸ ՋՆՋՈՒԻ):

- ձուկ(ն) + որս → ձկնորս - «ու»ն սղուած
- գիր + ա + տուն → գրատուն
- մանուկ + ա + պարտէզ →
- լիճ + ափ →
- երկիր + ա + գործ →
- գլուխ + ա + գիր →

6. Ամէն մէկ սիւնակէն ընտրենք ԱՐՄԱՏ ՄԸ եւ կազմենք նոր բառ մը.-

- | | |
|-----------|----------------------|
| o խումբ | o վառ |
| o երկու | o պետ |
| o բոց | o ոտ(անի) → երկոտանի |
| o ինքն | o քանակ |
| o մեծ | o վստահ |
| o ժանտախտ | o հար(ուած)..... |

7. Արմատներեն մեկնելով՝ կրնանք մեզի անծանօթ ԲԱՐԴ ԲԱՌԻ մը իմաստը ենթադրել եւ հասկնալ.-

o բոցավատ → բոց. վատ → բոցի՝ կրակի պէս վառուող

o պանդոկապետ →

o ծայնագիր →

o մատնանշել →

o տնազգեստ →

o եռոտանի →

o մօրաքոյր →

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կանոններ.-

- ր-էն ետք ընդհանապէս՝ -ջ. վերջ, շուրջ: Բացառութիւն՝ փարշ:

- Ուշադիր վերջաւորութիւններուն.- -ութիւն, -ութեան, -ութենէ, -ութեամբ:

Անցեալ շաբաթավերջին, տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի խմբապետութեան արշաւը՝ երեք աստիճանաւորներուն համար:

Արշաւը մէկ մասն էր ծրագրի մը, որ մեր երեքներուն մօտ կը կերտէ չարքաշութիւն: Անկա միանգամայն առիթ կու տայ կիրարկելու որոշ գիտելիքներ:

Մասնակցեցան երեք արիներ չորս մասնաճիւղերէ: Անոնք երկու օրուան մէջ կտրեցին շուրջ 41 քիլոմէթր, քարտէսի օգնութեամբ:

8

ԱԾԱՆՑ-ՄԱՍՆԻԿ / ԱԾԱՆՑԱԻՐ ԲԱՌ (ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ)

Բառ մը ԱԾԱՆՑԱԻՐ է, երբ կազմուած է արմատ մը եւ մասնիկ մը: Այսպէս՝ *ան-տուն, գուն-աւոր*:

1. Նախածանց կը կոչուի արմատին առջեւ դրուած ածանց-մասնիկը:

- Շրջանակէ՝ **ՆԱԽԱԾԱՆՑ ՄԱՍՆԻԿ**.-

(աններելի . ապուշ . դժգոհ . տկար . դժբախտ . տժգոյն . արտասահման . ներգաղթ . արտագաղթ . հակադիր . տարօրինակ . համաձայն . համազգային . ընդգծել

2. Վերջածանց կը կոչուի արմատէն վերջ դրուած ածանց-մասնիկը:

- **Շրջանակէ՛ վերջածանց ՄԱՍՆԻԿը.-**

տն(ակ) . ձորակ . ծկնիկ . քոյրիկ . երգիչ . նկարիչ . վարդենի . նարնջենի . ալիւրոտ .
փոշոտ . քաղաքացի . սասունցի . բարութիւն . քաջութիւն . փայտեայ . երկաթեայ

3. ԱԾԱՆՑ-ՄԱՍՆԻԿԸ կ'ունենայ ընդհանուր իմաստ մը: Գտի՛ր ածանց մասնիկը. տո՛ւր իմաստը: Յետոյ այդ ածանցով կազմէ՛ նոր բառ մը.-

Այսպէս՝ անտուն → ան- → չունեցողի իմաստ → անխելք

- դժգոհ →
- դասարան →
- Հայաստան →
- ոսկեղէն →
- ուաուցիչ →

4. ՀՆՉԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ: Նկատե՛նք որ որոշ գիրեր բարդումի կամ ածանցումի ատեն կը փոխուին:

- Առաջին՝
- **է → ի**
- գեր → գիրուկ
- սեր →
- մեջ →
- տեր →

- Երկրորդ՝
- ոյ → ու
 - գոյն → գունաւոր
 - թոյն →
 - լոյս →
 - բոյս →

ՀԱՏՈՒԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կանոններ.-

- **ա** ձայնով վերջացող բառերը կ'առնեն չհնչուող **-յ** մը: Բացի՝
1. հրամայականէն (**զնա**), **2.** **ասիկա, ատիկա, անիկա. հիմա, ահա, ապա...** բառերէն, **3.** յատուկ անուններէն (**Արա, Սեդա**), **4.** **օտար բառերէն (սինեմա, շոքոլա...),**
- **-ն**-էն առաջ, արմատ բառի մէջ, յաճախ՝ **ռ-**. (**ծեռն - ձեռք . լեռն - լեռ**): Բցոթ. կրնամ, կը զարնեմ:

Եթե տեսնեք մուկ մը, որ սենեակ կը մտնէ ու կ'իյնայ կը սատկի, զայն հալածելու համար չիջնէ՞ք անկողինէն, անոր չդպչի՞ք: Շուտով ելեկտրական կոճակը կոխեցէք: Սպասաւորը կու գայ. ձեռք չի դպցներ մուկին, այլ անոր վրայ մասնաւոր դեղ մը կը թափէ:

Հոս մուկերը խոշոր են, եւ կատուները չեն պաշտպաներ մեզ. կատուի տեղ՝ կը գործածենք մուկ բռնող շուներ: Մանաւանդ հիմա այնքան շատ մուկ կայ որ շուներու ամբողջ բանակ մը չի բաւեր՝ զանոնք բնաջնջելու: